գին զանգուածը, յետոյ ամենայն զօրութեամբ ուղղեցանք դէպ 'ի Նեղուցն Պէհրինկայ, զոր անցանք 'ի 20 յուլիսի։ Մեր նպատակին հասած էինք. հիւսիսային արևելեան բաղդաւոր գիւղը ողջունեցաւ թնդանօթի հինգ հարուածներով և մեծ հանդիսաւորութիւններով։ Անցնելով Պէհրինկայ Նեղուցը, նաւարկութեան աշխարհագրական նպատակը լմնցաւ. բայց սառուցեալ ծովուն ըրած ուսումնական դիտողութիւնները՝ խաղաղական Ովկիանոսի զննողութեանց հետ լաւ կերպով կապելու համար, թէ ասիական և թէ ամերիկեան ծովափանց այլ և այլ տեղեաց այցելութիւն ըրինք, և 'ի վերջոյ ամենակարող կղզոյն Պէհրինկայ, յորում օգոստոսի 14էն մինչև 15 կեցանք։

Թողլով Պէհրինկայ Նեղուցը, առադաստ բացինք երթալու դէպ յեղբօմայ, ուր, ինչպէս որ ըսի, հասանք անցած ամսոյն 3ին։

Վէկա Նաւը՝ որ այս ահաւոր հիւսիսային սառնապատ ծովը կտրեց անցաւ, իր կազմութեանը մէջ խիստ նոր և արտաքոյ կարգի բան մը չունի. նման է ուրիշ որ և է առագաստաւոր երկար ճանապարհորդութիւն ընող նաւու, որուն վրայ դրուած ըլլայ օժանդակ մեքենայ մը 60 ձիոյ զօրութեամբ։ Քառասուն մեդր երկայնութիւն ունի, ինն՝ լայնութիւն, և վեց՝ խորութիւն։ Երեք երկայն կայմ ունի և գլուխը խրթանի ձևով չինուած՝ սառն աղէկ կըտրելու համար։ Ողնափայտին կողից չորս կողմը թաղիքով մը պատած է, որուն մէջ կայ փայտերու կարգեր և անոնց մէջ դատարկ միջոց մը, յորում չոգէին առաջ եկած ջերմիկ օդը կ'ընթանայ։ Ամենայն կարելի մխիթարութեամբը հոգացեալ սպայից սենեակները՝ փոխանակ կողմնակի չինուելու, բոլորակաձև են՝ մեքենային կաթսային կոթընած, այնպէս որ ասոր ջերմութիւնը՝ կը ծառայէ նաև սենեկաց։ Նաւուն գլուխը նաւաստեաց սենեակը կայ և 'ի խելն՝ սպայից և ուսումնականաց համար սրբարան մը. թէ սրահը թէ սենեակը՝ ձուլածոյ հինգ ստուար կրակարան ունին, որոնք հանքային ածխով կամ ուրիշ այրելեօք վառուելով, բոլոր շրջապատ օդը սաստկապէս կը տաքցընէ։

Նաւուն մէջ երեսուն հոգի էին, այսինքն՝ չորս անդամք ուսումնական նաւարկութեան, Նորտէնպեօլտ, Ողուքսպէրկ երկրախօս, Ռ. Քիէլման տնկաբան և Նորտկուիսդ մետէորաբան, թէ պէտ և սպայ՝ ռուս պահապան զինուորաց մէջ։ Հինգ սպայք՝ կազմեցք աւագածողով սպայակոյտն, այսինքն է՝ հրամանատարն բալտնէր, տեղակալն Պրուվիչ, Պովէ, Հովկարտ և Ալենվիսդ բժիշկ. մնացածները՝ նաւաստի, տնտես, մատակարար, խոհարար և մեքենագործ. ամենքն ալ առոյգ երիտասարդք։

Ամենեն մեծ շոգենաւն. — Անդրատլանտիկեան ինմանի ծանօթ ընկերութեան ծախքով չինուելու վրայ է 'ի Պարօ ամենէն մեծագոյն շոգենաւն, 'ի բայց առեալ զնրէյդ խատերն, որ պիտի կտրէ զծովն, Հաւոմ Քաղաք անուանով։ — Իրեն այլ և այլ մեծութեան չափերն են.

Երկայնութիւն . . .	մեդր	180,00
Լայնութիւն	»	15,85
Բարձրութիւն . . .	»	11,80
Ցեղափոխութիւն. տակառաչափ		8,300

Այս հսկայն 1881ին սկիզբները պատրաստ պիտի ըլլայ։

Իրեն մեքենան, բաղադրեալ դրութեամբ, 8500 ձիու զօրութիւն պիտի ունենայ, 6 գլանաց ձեռքով, երեք վերին և երեք վարին ճնշման, 8 կաթսայոյ՝ իւրաքանչիւրը վեց փուռով։ — կը յուսան որ 18 մղոն արագութիւն մը կարենան ունենալ. և եթէ յանկարծ մեքենան դիպուածով ջնասուի, իր առագաստներուն մակերևոյթը, չորս կայմից վրայ տարածուած, պիտի քաջցընէ զայն նոյնպէս լաւ կերպով։ — Պիտի տանի 300 առաջին դասու ճանապարհորդ։

digitised by A.R.A.R.@